«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ԲԱՂԱԴՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Գրիգորյան

Ուսումնական հաստատություն՝ Եղվարդի թիվ 1 ավագ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

ԳԼՈՒԽ 1

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ----------6

ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ----------6

ԳԼՈՒԽ 2

ԲԱՂԱԴՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ----------9

ԳԼՈՒԽ 3

ԲԱՂԱԴՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ----------13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման գործընթացը դասավանդման և ուսման գործընթաց է: Դասավանդումն իրականացնում է ուսուցիչը և այդ ընթացքում աշակերտներին հաղորդում է մարդկության կուտակած սոցիալական-մշակութային փորձը, զարգացնում նրանց ճանաչողական գործունեությունը:

Ուսումը աշակերտների կողմից սոցիալական-մշակութային փորձը՝ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները յուրացնելու գործընթացն է, որի կարևոր պայմանը նրանց ինքնուրույնության ապահովումն է:

Ուսուցման գործընթացն անհնար է առանց ուսուցչի և աշակերտի միաժամանակյա գործունեության:

Միջնակարգ կրթության համակարգում մայրենի լեզուն առանձնահատուկ տեղ ունի անձի ձևավորման, նրա մտավոր առաջընթացի, վերլուծական և պատկերավոր մտածողության զարգացման, ինչպես նաև մնացած բոլոր առարկաների ընկալման և յուրացման համար:

Լեզվի ուսուցման հիմքում տեսականն ու գործնականը պետք է սերտ շաղկապված լինեն, որպեսզի տեսական նյութի յուրացումը անպայմանորեն կատարվի գործնա-կան աշխատանքի միջոցով:

Շատ կարևոր է լեզվի ուսուցումը կապել տարբեր առարկաների հետ և հարստացնել աշակերտների հանրակրթական գիտելիքները:

Հետազոտության թեման ՝ Բաղադրյալ հատուկ անունների գրության ուսուցումը:

Թեմայի ընտրության հիմնավորումը՝ թեման ընտրվել է, քանի որ այն բավական բարդ է և առանձնապես կարևոր՝ բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը յուրացնելու, մտապահելու և կիրառելու համար, բացի այդ <<Բաղադրյալ հատուկ անունների գրությունը>> թեմայի լավ իմացությունը աշակերտներին հարկավոր է լինելու հետագա աշխատանքային գործունեության ընթացքում, քանի որ հատուկ

անունների գրության կանոնների իմացությունը ունի խիստ գործնական նշանակություն և կիրառություն:

Հետազոտության նպատակը՝ ցույց տալ,որ միջառարկայական կապերի ստեղծումը նպաստում է բաղադրյալ հատուկ անունների գրության վերաբերյալ գիտելիքների ձևավորմանն ու համակարգմանը, անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, անձի զարգացմանը:

Հետազոտության խնդիրներն են՝

- տեսական ու գործնական ի՞նչ մոտեցումներ են առկա թեմայի վերաբերյալ,
- ինչպե՞ս միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով բաղադրյալ հատուկ անունների մասին տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ,ամրապնդել և կիրառել ,
- ինչպե՞ս միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապեր ստեղծել
- ինչպե՞ս միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով զարգացնել քննադատական և ստեղծագործական կարողություններ:

Հետազոտության հարցը՝ բաղադրյալ հատուկ անունների գրության ուսուցման ժամանակ միջառարկայական կապերի ստեղծումը որքանո՞վ կօգնի բաղադրյալ հատուկ անունների մասին նախկինում ունեցած գիտելիքների համակարգմանը, ամրապնդմանը, կիրառմանը, անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, քննադատական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Հետազոտության դրույթը՝ սովորողներին օգնել բացահայտելու և խմբավորելու պատմության, մշակույթի, աշխարհագրության և գրականության նյութերում զետեղված բաղադրյալ հատուկ անունները, համագործակցելու ընկերների հետ՝ փաստարկված պաշտպանելով սեփական տեսակետը, հարստացնելու հանրակրթական գիտելիքները:

4

Վերջնարդյունքը՝ միջառարկայական կապերի ստեղծման միջոցով աշակերտների մոտ կձևավորվեն և կհամակարգվեն բաղադրյալ հատուկ անունների գրության վերաբերյալ գիտելիքները, անցածի ու անցնելիքի միջև կստեղծվեն տրամաբանական կապեր, կզարգանան նրանց քննադատական և ստեղծագործական կարողությունները:

Մեթոդաբանություն՝

1 . Հարցադրում և պլանավորում,

2. Տվյալների հավաքում և գրանցում,

3. Տեղեկույթի համադրում և մշակում,

4. Թեմայի ուսուցում,

5. Վերջնարդյունքի գնահատում և ներկայացում,

5. Անդրադարձ:

ԳԼՈՒԽ 1

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Հարցի պատմությունից

Այսօր հանրակրթական դպրոցի կարևորագույն հիմնախնդիրներից մեկն այնէ, որ ուսուցումը լինի աշակերտակենտրոն: Ուսուցիչը տարբեր մեթոդներ գործադրելով, պետք է բարձրացնի աշակերտի գործունությունը դասերին, ոգևորի պասիվ երեխաներին: Նա պետք է աշակերտներին տրամաբանելու և ստեղծագործելու հնարավորություն տա: Այստեղ նրան օգնության են գալիս ուսուցման և արտաուսումնական աշխատանք-ների ընթացքում իրականացվող միջառարկայական կապերը:

Ուսուցման գործընթացում միջառարկայական կապեր ստեղծելու հիմնահարցը նույնքան հին է, որքան բուն իսկ առարկայական ուսուցումը:

Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր <<Մեծ դիդակտիկա>> աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»:

Մանկավարժության մեջ միջառարկայական կապերի հիմնահարցին անդրադարձել են (Յ. Ա. Կոմենսկի, Հ. Պեստալոցի, Ֆ. Հերբարտ, Ա. Դիստերվեգ, Խ. Աբովյան և ուրիշներ) գերազանցապես ճանաչողական առումով՝ միջառարկայական կապերի իրականացումը համարելով ուսուցման բարելավման կարևոր միջոց:

Մանկավարժագետներին զբաղեցրել է նաև միջառարկայական կապերի դասա-

կարգման հարցը: Այսօր էլ միջառարկայական կապերի դասակարգման գործընթացում չկա միասնական մոտեցում, այսինքն՝ տեսաբան մանկավարժագետները տարբեր հիմունքներով են դասակարգում միջառարկայական կապերը:

Միջառարկայական կապերը դասակարգելիս ոմանք (Մ. Ն. Սկատկին, Ն. Մ.

Վերզալին, Պ. Գ. Կուլագին և ուրիշներ) հիմք են ընդունում ժամանակային գործոնը:

Ըստ ժամանակային գործոնի՝ լայն տարածում ունի միջառարկայական կապերի հետևյալ դասակարգումը՝

1) ուղեկցվող կամ հորիզոնական կապեր. պայմանավորված են երկու առարկաների համաժամանակյա տեղեկատվական նյութերով,
2) նախորդող կամ ուղղահայաց կապեր. գործադրվում են ուսումնական տարվա համեմատաբար կարճ, բայց հաջորդական ժամանակաշրջաններում (քառորդներ, կիսամյակներ) երկու առարկաների տեղեկատվական նյութեր ուսումնասիրելիս,
3) հեռանկարային կապեր. պայմանավորված են մի քանի առարկաների այնպիսի տեղեկատվական նյութով, որ գործում է առավել երկար ժամանակ՝ 1-3 տարի:

Միջառարկայական կապերի օգտագործումը հնարավորություն է տալիս միևնույն առարկայի կամ երևույթի, անձի և իրադրության մասին տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքներն ու տեղեկությունները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ: Դա օգնում է բացատրվող նյութի ճիշտ ու խոր յուրացմանը, անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների փոխանցմանն ու օգտագործմանը, որը հսկայական զարգացնող արժեք ունի երեխաների համար:

Միջառարկայական կապերի օգտագործումն իր որոշակի տեղը պետք է ունենա ուսումնական աշխատանքի ընդհանուր համակարգում և նույնիսկ յուրաքանչյուր առանձին նյութի ուսումնասիրության ընթացքում: Դասի ժամանակ կամ նյութի

ուսումնասիրության ընթացքում միջառարկայական կապերը կարող են օգտագործվել

երեք տարբեր պահերին՝ նայած անհրաժեշտությանը և նյութի բնույթին.

1. Ուսումնասիրվող նյութի շուրջ անցկացվող նախապատրաստական զրույցի ընթացքում ուսուցիչը կարող է օգտագործել ուսումնական այլ առարկաների և այլ գիտությունների տվյալները նյութի վերաբերյալ ավելի պարզ պատկերա-

ցում տալու համար, որպեսզի դրանով իսկ հող ստեղծվի բուն նյութի յուրացման համար:

2. Նյութի մշակման ժամանակ,երբ աշակերտների ընթերցած այս կամ այն հատվածի շուրջ որոշակի բացատրություններ են տրվում ուսուցչի և աշակերտների կողմից, կարելի է համանման փաստեր բերել նաև արդեն անցած նյութերից, համեմատություններ, հակադրություններ ու զուգահեռներ անցկացնել՝ միտքն ավելի պարզ, գաղափարներն ու հասկացություններն ավելի մատչելի դարձնելու համար: Այսպիսի օժանդակ կամ լրացուցիչ փաստարկումներ աշակերտներից պետք է պահանջել նաև նրանց պատասխանելու ժամանակ, որը շատ կարևոր է ոչ միայն նյութը խոր յուրացնելու, այլև ինքնուրույն եզրակացությունների հանգելու կարողություն մշակելու տեսակետից:
3. Ամփոփման ժամանակ լայնորեն կարելի է դիմել միջառարկայական կապերի օգտագործմանը՝ կատարելով հեռավոր կամ կողմնակի էքսկուրսիաներ, որոնք թույլ են տալիս ազատ դատողություններ անել՝ առանց հիմնականից շեղվելու, որովհետև այդ դեպքում ընդհանուրը նկատի ունենք և ոչ թե կոնկրետ նյութը: Միջառարկայական կապերի այսպիսի օգտագործումն ավելի շատ աշակերտների կողմից է կատարվում[1]:

ԳԼՈՒԽ 2

ԲԱՂԱԴՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ

[1] ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, Հայոց լեզու և գրականություն, 2005, թիվ 3-4, էջ 82:

Առարկա կամ առարկայացված հասկացություն ցույց տվող բառերը կոչվում են գոյականներ:

Ըստ բառիմաստային ընդհանրությունների և քերականական յուրահատկությունների՝ գոյականները բաժանվում են հետևյալ խմբերի՝ ա) հասարակ և հատուկ գոյականներ, բ) թանձրացական և վերացական գոյականներ, գ) անձ և ոչ անձ ցույց տվող գոյականներ, դ) շնչավոր և անշունչ գոյականներ, ե) նյութ ցույց տվող գոյականներ, զ) հավաքական գոյականներ, է) գերդաստան,տոհմ, խմբակցություն ցույց տվող գոյականներ[2]:

Միևնույն տեսակի բոլոր առարկաներին տրվող ընդհանուր անունը կոչվում է հասարակ անուն:Օրինակ՝ գիրք,հայր, ծաղիկ, պարտեզ և այլն:

Միևնույն տեսակի առարկաներից յուրաքանչյուրին տրվող առանձին անունը կոչվում է հատուկ անուն:Օրինակ՝ Տիգրան, Արագած, Հրազդան, Սև ծով և այլն:

Հատուկ անունները գրվում են մեծատառով:

Հատուկ անուններ են աշխարհագրական անունները, մարդկանց անուններն ու ազգանունները, հիմնարկների, կազմակերպությունների անվանումները, գրական, գիտական և այլ ստեղծագործությունների անունները, կենդանիներին տրվող անունները և այլն:

Հատուկ և հասարակ գոյականները երբեմն ենթարկվում են իմաստային տեղաշարժերի՝ կազմելով համանունական զույգեր.
ա) հատուկ անունները դառնում են հասարակ (Մաուզեր՝ զենքն ստեղծողի անձնանուն, մաուզեր՝ զենքի տեսակ),

բ) հասարակ անունները դառնում են հատուկ (անդրանիկ՝ ավագ, մեծ, առաջնեկ,

Անդրանիկ՝ անձնանուն)[3]:

Հատուկ անուններն ըստ կազմության լինում են **պարզ** և **բաղադրյալ**:

---

[2] Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն,Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան,2004, էջ 47:

[3] Մարգուշ Միրումյան, Հայոց լեզու, Երևան, 2012, էջ 129:

Մեկ բառից կազմված հատուկ անունը պարզ է, ինչպես՝ Տիգրան, Բջնի, <<Կայծեր>> և այլն:

Բաղադրյալ են այն հատուկ անունները, որոնք կազմված են երկու և ավելի բաղադրիչներից[4]:

Գոյություն ունեն որոշակի կանոններ, ըստ որոնց՝ բաղադրյալ հատուկ անունների կա՛մ բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառ, կա՛մ միայն առաջին բաղադրիչը:

1. Բոլոր բաղադրիչները մեծատառով են գրվում հետևյալ դեպքերում:

ա) Եթե բաղադրյալ հատուկ անունը որևէ երկրի, պետության կամ պետական կազմավորման անուն է, օրինակ՝ Հայաստանի Հանրապետություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ռուսաստանի Դաշնություն:

բ) Եթե բաղադրյալ հատուկ անվան բաղադրիչները առանձին-առանձին հատուկ անուններ են, օրինակ՝ Արփա-Սևան, Դոնի Ռոստով, Հովհաննես Թումանյան: Նրանց կազմում եղած քերականական նշանակություն ունեցող բառ-մասնիկները գրվում են փոքրատառ, ինչպես՝ Ռիո դը Ժանեյրո, Լեոնարդո դա Վինչի, Ժաննա դ'Արկ և այլն:

գ) Եթե բաղադրյալ հատուկ անունը բաղկացած է լրացում-լրացյալից, և լրացյալը հատուկ անուն է. այդ դեպքում լրացումը ևս գրվում է մեծատառով՝ իբրև նրա մականուն, օրինակ՝ Հյուսիսային Կովկաս, Արևելյան Հայաստան, Նոր Նախիջևան, Վազգեն Առաջին, Աշոտ Երկաթ, Զորի Միրո:

դ) Հոգևոր-պատմամշակութային այն բաղադրյալ հատուկ անուններում, որոնց մեջ բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին կամ <<Սուրբ>> մականվան հետ հատուկ անուն են, օրինակ՝ Անգղա Սուրբ Նշան, Ընծայից Սուրբ Աստվածածին, Մաստարայի Սուրբ Հովհաննես:

2. Մեծատառով են գրվում բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչները հետևյալ դեպքերում:

---

[4] Գայանե Օհանյան, Հայոց լեզվի քերականության ուղեցույց, Երևան, 2007, էջ 60:

ա) ***Եթե լրացում-լրացյալի կապակցության մեջ լրացյալը հատուկ անուն չէ***, օրինակ՝ Արարատ լեռ, Արագածոտնի մարզ, Խաղաղ օվկիանոս, Սուլեմայի լեռնանցք, Սուրբ Նշան եկեղեցի:

բ) Գրական, գիտական և այլ երկերի, գրքերի, պարբերական հրատարակությունների բաղադրյալ անվանումներում, օրինակ՝ <<Պատվի համար>>, <<Թմկաբերդի առումը>>:

գ) Համաշխարհային կազմակերպությունների անվանումներում, օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպություն, Շախմատի համաշխարհային ֆեդերացիա, Ազգերի լիգա:

դ) Շքանշանների ու մեդալների, ինչպես նաև պատվավոր կոչումների ու մրցանակների բաղադրյալ անուններում, օրինակ՝ <<Մովսես Խորենացի>> մեդալ, <<Գրիգոր Լուսավորիչ>> շքանշան, <<Փառքի առաջին աստիճանի>> շքանշան, Պետական մրցանակ, Նոբելյան մրցանակ:

ե) Բոլոր պետությունների օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն մարմինների բաղադրյալ անուններում, օրինակ՝ Ազգային ժողով, Պետական դուման, Ներկայացուցիչների պալատ, Գերագույն դատարան, Սահմանադրական դատարան:

զ) Պատմական նշանավոր իրադարձությունների և ազգային ավանդական, պետական տոների բաղադրյալ անուններում, օրինակ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմ, Մեծ եղեռն, Թոնդրակյան շարժում, Թարգմանչաց տոն, Սուրբ ծնունդ, Զատկի տոն (Զատիկ)[5]:

Հապավումների մեջ մեծատառով են գրվում.

ա) Հատուկ և հասարակ բաղադրյալ անունների տառային հապավումներն ամբողջությամբ.

ՌԴ, ԱՄՆ, ՉԺՀ, ՄԱԿ, ՀԳՄ, ՀԺԿ, ՀԴԿ, ԳԱԱ (Գիտությունների ազգային ակադեմիա), ՄՏԿ, ՀՕՊ, ՊԱՊ *և այլն:*

[5] Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սաքապետոյան, Հայոց լեզու,Ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 11-րդ դասարանի դասագիրք, Երևան.2015,էջ 32:

Հասարակ գոյականի արժեք ստացած բուհ, նէպ, հէկ, զագս *և նման տառային հապավումները գրել փոքրատառով:*

բ) Բաղադրյալ հատուկ անունների ոչ տառային հապավումների միայն առաջին տառը.

(Լեհաստանի Հանրապետության) Պետխորհուրդ, (Ռուսաստանի Դաշնության) Պետդումա, Անդրֆեդերացիա *և այլն:*

գ) Հասարակ անվան գործածություն ունեցող բաղադրյալ անունների տեղայնացնող բաղադրիչի առաջին տառը.

Հայկինո, Հայպետհրատ, Գրոզնեֆտ, Լենֆիլմ, Մոսֆիլմ, Հայոսկի *և այլն:*

դ) Խառը տիպի հապավումների՝ նաև առանձին բաղադրիչների առաջին տառը.

ԱՄ Նահանգներ, ՌԴ Դումա (Պետդումա), ԼՂ Հանրապետություն, ՀՀ Կառավարություն, Երևանյան հէկ, ՀամԼԿԵՄ, ՀամԿ(բ)Կ *և այլն:*

ե) Օտարազգի տառանուններով հատուկ անունների յուրաքանչյուր տառանվան առաջին տառը.

ԱյԲիԷմ, ԲիԲիՍի, ԷյԲիՍի, ԷյՍիԲիԷյ, ԷֆԷմ, ՍիԷնԷն *և այլն:*

ԳԼՈՒԽ 3

ԲԱՂԱԴՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

<<Հատուկ անունների ուղղագրությունը>> թեման բավական բարդ է և առանձնապես կարևոր՝ բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը յուրացնելու, մտապահելու և կիրառելու համար:

Մինչև ուղղագրական կանոնների ուսուցումը աշակերտներն արդեն սովորել են գոյականի տեսակները և ընդհանուր գիտելիքներ ունեն հատուկ անունների վերաբերյալ: Սակայն կանոն սովորելը, առանց ուղղագրության համապատասխան ուսումնական նյութ օգտագործելու, արդյունք չի տա, որքան էլ որ անգիր իմանան այդ կանոնները, դարձյալ ապահովված չեն լինի սխալներից, եթե որոշակի վարժություններով գիտակցաբար չսահմանեն և յուրացնեն այդ կանոնները: Բացի այդ՝ վերջին տասնամյակում բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տալիս բաղադրյալ հատուկ անունների գրությունը: Հատուկ անունների մեծատառով գրության հարցի շուրջ կարծիքները տարբեր են: Բայց քանի որ կա ընդունված որոշում՝ <<Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գրության մասին>>, ուստի մենք ընտրեցինք այս թեման , որպեսզի, հետևելով այդ որոշմանը, ինչպես նաև առաջնորդվելով դասի վարման ավանդական և ժամանակակից մեթոդներով,առաջարկենք մեծատառերի գրության այդ կանոնները աշակերտներին սովորեցնելու մեր տարբերակը՝ շեշտը դնելով միջառարկայական կապերի ստեղծման վրա:

Թեմայի ուսուցման համառոտ նկարագրություն

Դասարան՝ XI

Առարկա՝ Հայոց լեզու

Թեմա՝ Բաղադրյալ հատուկ անունների գրությունը:

Ձևավորվող կարողունակություն՝ լեզվական գրագիտություն, սովորել սովորելու կարողունակություն, ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն:

Հիմնական հասկացություն՝ հաղորդակցում, լեզվական համակարգ, ստեղծարարություն, ինքնություն:

Ենթահասկացություն՝ բանավոր,գրավոր հաղորդակցում, ձևաբանություն, տեքստի ստեղծում, արժևորում:

Խաչվող կամ ընդհանրական հասկացություն՝ օրինաչափություն, անհատական և մշակութային արժեհամակարգ:

Միջառարկայական կապեր՝ Պատմություն, Աշխարհագրություն, Մշակույթ, Գրականություն:

Նպատակներ՝

Առարկայական

- իմանալ բաղադրյալ հատուկ անունների գրության առանձնահատկություններն ու օրինաչափությունները

Կարողություն

- գրավոր խոսքում ճիշտ կիրառել բաղադրյալ հատուկ անունների գրության առանձնահատկություններն ու օրինաչափությունները

Անձի զարգացում

- զարգացնել ուղղագրական հմտություններ
- դրսևորել ճանաչողական, վերացարկման, մտահանգման, դիտարկման, երևույթների նկատմամբ հետաքրքրություն և քննադատական մոտեցում
- ձևավորել համակարգային մտածողություն
- լսել խոսակցին, աշխատել ընդհանուր նյութերով

- զարգացնել գեղագիտական ճաշակ

Վերջնարդյունքներ՝ խոսքի մեջ տարբերակի բաղադրյալ հատուկ անունները, տեքստից դուրս գրի բաղադրյալ հատուկ անունները, գրավոր խոսքում ճիշտ կիրառի բաղադրյալ հատուկ անունների գրության առանձնահատկություններն ու օրինաչափությունները, դրսևորի ճանաչողական, վերացարկման, մտահանգման, դիտարկման, երևույթների նկատմամբ հետաքրքրություն և քննադատական մոտեցում, համագործակցի ընկերների հետ՝ փաստարկված պաշտպանելով սեփական տեսակետը, զարգացնի գեղագիտական ճաշակ:

Անհրաժեշտ նյութեր՝ գրատախտակ, քարտեր, տետր, դասագիրք:

Կիրառվող մեթոդներ՝ զրույց, անհատական աշխատանք, փոխգործուն նշանների աղյուսակ,խմբային աշխատանք, 10-րոպեանոց շարադրություն:

Տևողությունը՝ 2 դասաժամ:

Դաս 1

Ընթացքը՝

Խթանման փուլում (8 րոպե) զրույցի միջոցով վերհիշում ենք <<Հատուկ և հասարակ գոյականներ>> թեմայից նախորդ ժամին սովորածը, աշակերտներին թվարկել ենք տալիս անձնանուններ, տեղանուններ, ազգային հերոսների, տոների և կազմակերպությունների անուններ և հանձնարարում այդ անունները գրել գրատախտակին՝ հատուկ ուշադրություն դարձնելով ուղղագրությանը: Այնուհետև աշակերտներին բաժանում ենք պատմության, մշակույթի, պատմական անունների, աշխարհագրության վերաբերյալ նախադասություններով քարտեր և հանձնարարում դուրս գրել բաղադրյալ հատուկ անունները և շարքով գրել տետրում:

ա) Փոքր Վեդի գյուղի մոտակայքում՝ բլրի վրա, եղել է Գրիգոր Լուսավորչի անվան հետ կապված հայոց հանրահայտ ուխտատեղիներից մեկը: Հնում այստեղ է գտնվել պատմական Արտաշատ քաղաքը, իսկ Խոր Վիրապի բլուրներին՝ միջնաբերդը:

բ) Հայաստան պետության և հայ ժողովրդի զբաղեցրած տարածքի սահմանները Տիգրան Մեծի օրոք ձգվել են Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով և Կովկասյան լեռնաշղթայից մինչև Միջագետքի դաշտային մասը: Հայաստան են կոչվել նաև Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում , տարբեր ժամանակներում ձևավորված թագավորություններից մինչև մերօրյա ՀՀ և ԼՂՀ հայոց անկախ պետությունները:

գ) Հայ գեղանկարիչ-քանդակագործ Երվանդ Քոչարը Սասունցի Դավթին, Քուռկիկ Ջալալին հեծած, Սասնա բարձր լեռներից թռցրել ու մի ոստյունով իջեցրել է նոր Երևանի դարպասների մոտ, այն մեր ժողովրդի անունից առաջինն է դիմավորում գնացքով Երևան ժամանող հյուրերին:

դ) Գրիգոր Զոհրապը կանգ առավ գրասեղանի մոտ և հայացքը ուղղեց Էդգար Շահինի <<Փարիզուհին կառքում>> նկարին, ապա նստեց, գրեց վերնագիրը՝ <<Պատերազմի դաշտեն>>, և սկսեց խորհել Հայաստանի ճակատագրի մասին:

Հետո աշակերտներն ամբողջ դասարանին են ներկայացնում իրենց գրառումները, որոնք ավելացվում են գրատախտակին գրված հատուկ անունների շարքում:Բոլորն, այսպիսով, իրենց տետրերում ունենում են նշված հատուկ անունների շարքը:

Իմաստի ընկալման փուլում (20 րոպե) աշակերտները սովորում են բուն նյութը՝ բաղադրյալ հատուկ անունների ուղղագրության կանոնները: Իհարկե, աշակերտներն արդեն ունեն ճիշտ գրված հատուկ անունների շարքը: Այժմ կազմում ենք 3- 4 հոգանոց խմբեր և հանձնարարում խմբերին ուշադիր դիտել, խորհել և ձևակերպել սահմանումները, կանոնները: Ամեն մի կանոն սահմանելիս գրում են իրենց ունեցած

ցանկից ընտրած օրինակները, կարող են ավելացնել նաև նորերը: Խումբը կազմում է մի միասնական օրինակ:

Այս ամբողջ ընթացքում շրջում ենք, ուղղորդում և օգնում աշակերտներին

Անհատական աշխատանքն ավարտելուց հետո նորից նույն խմբերով քննարկում են, ընդհանրացնում ու սովորում դասը: Ամեն խմբից մեկ աշակերտ կարող է դասարանին ներկայացնել իր իմացածը կամ կարելի է մաս-մաս բնութագրել՝ իրար շարունակելով: Լրացուցիչ բացատրություններով ամրապնդում ենք աշակերտների սովորածը:

Կշռադատման փուլում (15 րոպե) աշակերտների ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար գրել ենք տալիս 10-րոպեանոց

շարադրություն՝ օգտագործելով տարբեր կանոններին պատկանող բաղադրյալ հատուկ անուններ: Ստուգում ենք շարադրությունները և կատարում ձևավորող գնահատում:

Անդրադարձի փուլում (1 րոպե) հարցերով ամփոփում ենք նոր դասը:

Հարցեր՝

1. Ի՞նչ սովորեցինք:
2. Ինչո՞ւ սովորեցինք:

Տնային աշխատանք (1 րոպե)՝ Հանձնարարում ենք աշակերտներին իրենց պատ-մության, աշխարհագրության և գրականության դասագրքերից դուրս բերեն օրինակներ բաղադրյալ հատուկ անունների գրության յուրաքանչյուր կանոնի վերաբերյալ:

Հաջորդ ժամին ստուգում ենք յուրաքանչյուր աշակերտի դուրս բերած բաղադրյալ հատուկ անունները՝ հաշվի առնելով դասագրքերում հանդիպող սխալները: Այնուհետև կատարում ենք վարժություններ կիրառական բնույթի՝ իրենք որոշեն՝ մեծատառ, թե փոքրատառ: Վերջին 20 րոպեն տալ թելադրություն Ռուբինա Նազարյանի թելադրության ձեռնարկից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով վերը նկարագրվածը՝ ամրագրենք, որ միջառարկայական կապերը օգնում են դիմակայել հանրակրթության մարտահրավերներին և բարձրացնել ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը: Միջառարկայական կապերի օգտագործումը հնարավորություն է տալիս միևնույն առարկայի կամ երևույթի, անձի և իրադրության մասին տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքներն ու տեղեկությունները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ: Դա օգնում է բացատրվող նյութի ճիշտ ու խոր յուրացմանը, անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների փոխանցմանն ու օգտագործմանը, որը հսկայական զարգացնող արժեք ունի երեխաների համար:

Բաղադրյալ հատուկ անունների գրության ուսուցման ժամանակ, ստեղծելով միջառարկայական կապեր Պատմության, Մշակույթի, Աշխարհագրության և Գրականության հետ, մենք հնարավորություն տվեցինք աշակերտներին բաղադրյալ հատուկ անունների մասին նախկինում ունեցած գիտելիքները համակարգել, ամրապնդել և կիրառել, նպաստեցինք անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, քննադատական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը, հանրակրթական գիտելիքների հարստացմանը:

Միջառարկայական կապերն այս դեպքում օգնեցին աշակերտներին նյութն ավելի հեշտ ընկալել և ինքնուրույն ուսումնառության հմտություններ ձևավորել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, Հայոց լեզու և գրականություն, 2005, թիվ 3-4:

2. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն,Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան,2004:

3. Մարգուշ Միրումյան, Հայոց լեզու, Երևան, 2012, էջ 129:

4. Գայանե Օհանյան, Հայոց լեզվի քերականության ուղեցույց, Երևան, 2007:

5. Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սաքապետոյան, Հայոց լեզու,Ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 11-րդ դասարանի դասագիրք, Երևան,2015:

6. Կրթության ազգային ինստիտուտ. Լոռու մասնաճյուղ, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008: